



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 14 Օգոստոս, 2023

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 41

### ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԳՏԱԾ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՕԹՔԸ

**Ե**րանի անոր, որ թշուառին հոգ կը փանի.  
նեղութեան ժամանակ Տէրը զայն պիտի ազարտէ:  
Տէրը պիտի պահպանէ զայն, անոր կեանքը պիտի երկարէ,  
զայն երանելի պիտի դարձնէ այս աշխարհի մէջ,  
եւ զայն պիտի չձգէ թշնամիներու քմահաճոյքին:  
Տէրը պիտի օգնէ անոր, հիւանդ պառկած ժամանակ,  
եւ իր հիւանդութենէն զինք պիտի ապաքինէ:  
Ես Տիրոջ ըսի. «Ողորմէ ինձի, Տէր.  
բժշկէ զիս, ես քեզի դէմ մեղանչեցի»:  
Թշնամիներս չարակամութեամբ կ'ըսեն.  
«Ե՛րբ պիտի մեռնի, եւ անունն իսկ չյիշուի»:  
Ով որ ինձի փեսութեան կու գայ՝ կեղծ-կեղծ խօսքեր կը խօսի,  
բամբասանիք նիւթ կը ժողվէ, դուրս ելլելով՝ կը փարածէ:  
Բոլոր անոնք որ զիս կ'ատեն՝ կը հաւաքուին,  
եւ չար վախճանս կ'երեւակայեն, փսփսալով իրարու.-  
«Չարագուշակ հիւանդութեան բռնուած է.  
անկողինին գամուած է, եւ ալ բնաւ ոտքի չ'ելլեր»:  
Նոյնիսկ ամենէն մտերիմ ընկերս, որուն կը վստահէի,  
եւ որ ինձի սեղանակից կ'ըլլար միշտ,  
ան ալ ինձի դաւաճանեց:  
Բայց դուն, ով Տէր, ողորմէ ինձի,  
ոտքի հանէ զիս, որ ես անոնց փոխարէն հափուցանեմ:  
Թշնամիներս թող չկարենան յաղթանակ փանիլ իմ վրաս,  
եւ արով զհարսամ թէ կը հաւնիս զիս:  
Բայց դուն արդէն զիս կ'ընդունիս՝ անմեղութեանս համար,  
եւ յախիտեան զիս կը պահես քու ներկայութեանդ մէջ:  
Օրհնեալ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին,  
յախիտեանէ մինչեւ յախիտեան: Ամէն. ըլլայ:

### ԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենատուր Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէս ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Գրիստոս,**  
**աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,**  
**ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,**  
**ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց-**  
**եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

# ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՍԱՂՄՈՍ 41

## ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԳՏԱԾ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՕԹԵՐԸ

Մտերմիկ, ի խորոց սրբի խօսք ընդ Աստուծոյ: Վիճակ մը, որուն մէջէն կ'անցնի Դաւիթ, որուն մէջէն կ'անցնինք նաեւ մենք: Երբ նեղութիւնն ու փառապնքը կը պատ մեզ, այս Մաղմոսը աղօթենք, երբ թշնամիները կը պատեն մեզ, այդ Մաղմոսը աղօթենք: Յաճախ նեղութեան եւ դժուարութեան պահուն կը կորսնցնենք մեր ուղղութիւնը, կը շփոթուինք, եւ կը դիմենք այնպիսի միջոցներու, բացի Աստուծմէ: Ահա այս Մաղմոսը մեզ կը յիշեցնէ, Դաւիթի օրինակով՝ Աստուծոյ դիմելու:

Առաջին երեք համարները մեզ կը յիշեցնեն Քրիստոսի խօսքը, «Երանի ողորմածներուն, որովհետեւ ողորմութիւն պիտի գտնեն»: Այսպէս եւս նոյն իմաստով, «Երանի անոր, որ թշուառին, աղքատին, փնասկին հոգ կը փանի»: Նախ պահ մը եթէ պարկեղանները որ խօսքը կը վերաբերի նոյն ինքն Դաւիթին, ապա Դաւիթի կու գայ վստահեցնելու ըսելով, եթէ մարդիկ իրեն հոգ փանին Տէրը պիտի վարձաբար գիրենք: Այնպէս չէ որ այդ հոգաբարութիւնը Տէրը չտեսնէ: Դաւիթ կը վստահեցնէ, որ ոչ միայն երանելի է այդ մարդը, այլ նաեւ նեղութեան ժամանակ ալ Տէրը ինք պիտի ազարտէ, պիտի պահպանէ, եւ անոր կեանքը երկարէ, երանելի պիտի դարձնէ այս աշխարհի մէջ, եւ պիտի չձգէ թշնամիներուն քնահաճոյքին: Եւ այս անգամ եթէ ինք բռնուեցաւ հիւանդութեամբ՝ Տէրը պիտի օգնէ եւ պիտի ապաքինէ: Գիտէք կեանքը փոխադարձ եւ հեթով է: Այսօր ինձի, վաղը՝ քեզի: Յաճախ այնպէս կը կարծենք, որ մեր ունեցած վիճակը մնայուն է: Երբեք ալ մնայուն չէ: Ոչ լաւը, ոչ ալ վատը: Ոչ առողջութիւնը, ոչ ան հիւանդութիւն, անհանգստութիւնը: Ինչպիսին ալ ըլլան պարագաները, մենք ինչպիսի վերաբերմունքը կ'ունենանք: Մենք արդեօք որքանով հոգ կը փանինք աղքատին ու փնասկին, կամ ուրիշներ մեզի հոգ կը փանին որպէս աղքատ եւ փնասկ: Եւ փոխադարձ սպասելու Աստուծմէ: Որովհետեւ երբ հոգ կը փանինք, խորքին մէջ՝ Աստուծոյ նմանուելու, Անոր գաւակները ըլլալու արտայայտութիւնն է: Անոր համար է որ Քրիստոս կ'ըսէ, «Երանի ողորմածներուն, որովհետեւ ողորմութիւն պիտի գտնեն»: Երբ մէկու մը կ'ողորմինք, խորքին մէջ այդ մեր ողորմած ըլլալը կու գայ նոյնինք Աստուծոյ, որովհետեւ խորքին մէջ մենք ողորմած չենք, ու չենք կրնար ըլլալ: Քրիստոս յարակօրէն կ'ըսէ. «Եղէք ողորմած, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը՝ ողորմած է»: Երբ մենք վայելած ենք, ու կը վայելենք Աստուծոյ ողորմութիւնը, ահա այն արեւն նաեւ կ'ողորմինք ուրիշին: Երբ մարդոց կը ներենք, խորքին մէջ պէտք է որ անդրադառնանք որ նախ մենք ներում ստացած ենք, եւ այդպիսով ուրիշին ներելու ի վիճակի ենք, որովհետեւ շատ յարակ է, որ Աստուծոյ միայն կրնայ ներում շնորհել, Աստուծոյ միայն կրնայ ողորմիլ: Ուստի, երբ ճաշակած եմ այդ ներումը, այդ ողորմութիւնը, ապա կրնամ ուրիշին փայլ: Երբ ուրիշին փամ ահա այն արեւն երանի ինձի, որովհետեւ նեղութեան ժամանակ Տէրը պիտի ազարտէ, պահպանէ, օգնէ: Իսկ երբ ուրիշին ինձի ողորմին, եւ հոգ փանին, այն արեւն անոնք երանի պիտի ըլլան եւ Տէրը գիրենք պիտի ազարտէ, պահպանէ եւ օգնէ:

4-9 համարները նախ խոստովանութիւն մըն է, որ Դաւիթ կ'ընէ ըսելով. «Ողորմէ ինձի, որովհետեւ քեզի դէմ մեղանչեցի»: Յարակ եւ պարզ բացաբարութիւն, որ նոյնը նաեւ պիտի ըսէ Յովսէփ գեղեցիկ երբ Պետրարբեսի կինը առիթով մը ուզեց Յովսէփի հետ կսպ ունենալ: Յովսէփ պիտի պարասխանէ ըսելով. «Այս ընելով Աստուծոյ դմ մեղանչած կ'ըլլամ»: Ուերմն ամէն մեղք ու անօրէնութիւն խորքին մէջ Աստուծոյ դէմ է որ կը մեղանչենք: Նոյնին փարբերակով Քրիստոս պիտի ըսէ. «Ինչ որ ըրիք ուրիշին, ինձի ըրած եղաք»: Յաջորդ համարները, Դաւիթ կը ներկայացնէ իր թշնամիները, որոնք կը սպասեն անոր մահը, «Ե՛րբ պիտի մեռնի, անունը չիշուի»: Նոյնիսկ եթէ փեսութեան, այցի կու գան, կեղծաողորմութեամբ չար վախճանը կ'երեւակայեն, եւ կ'ըսեն, «Չարագուշակ անէծք կայ վրան, անկողինին գամուած է, բնաւ ուրքի չ'ըլլէր»: Փոխանակ աղօթելու, կը բամբասեն: Փոխանակ բժշկութիւն խնդրելու՝ մահը կու գեն: Նոյնիսկ իրեն մտերիմ բարեկամը, որ ամէն օր իրեն սեղանակից էր, զինք կը դաւաճանէ: Այս պարագային, Դաւիթի մասին ըլլալէ աւելի, խորքին մէջ մարգարէական պարգամներ են ուղղուած Յիսուս Քրիստոսին, մանաւանդ՝ այս համարը, ուր կ'ըսէ. «Ինձի սեղանակից, մտերիմ ընկեր, դաւաճանեց» խօսքը կը վերաբերի Յուդային:

10-12 համարները անգամ մը եւս կը խնդրէ Աստուծոյ ողորմութիւնը, որպէսզի Տէրը զինք ուրքի հանէ: Եւ կը խնդրէ որ թշնամիները իր վրայ յաղթանակ չտանին: Կը խոստովանի, որ Տէրը զինք ընդունէր է, եւ յաւիտեան զինք կը պահէ Իր ներկայութեանը մէջ: Խօսքը դարձեալ կը վերաբերի Քրիստոսի: Երկու առիթներով Հայրն Աստուծոյ պիտի յայտարարէ ըսելով. «Դա է Որդի իմ սիրելի, որուն հաճեցայ» անգամ մը մկրտութեան պահուն, անգամ մըն ալ այլակերպութեան պահուն:

13 համարը օրհնութիւն Տիրոջ, յաւիտանէ մինչեւ յաւիտեան, որովհետեւ միայն Տիրոջ կը վայելէ օրհնութիւն: